«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱԼՎԱՐԴ ՌԱԴԻԿԻ ԱՐԱՄՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ԳԵՐԱՍԻՄԻ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԹԵՄԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ղեկավար՝ մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր
Ա.Մ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ 4
ԳԼՈՒԽ 2. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑ 6
ԳԼՈՒԽ 3. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ 10
ԳԼՈՒԽ 4. ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ չափորոշչային պահանջների՝ տարրական դպրոցն ամենից առաջ պետք է սովորել սովորեցնի: Սովորել ցանկանալը և սովորել կարողանալը մնում են որպես կրթության գերխնդիրներ: Դրանց իրականացումը հնարավոր է միայն աշխատանքների ճիշտ պլանավորումով՝ ուսումնառության հենց առաջին օրվանից:Այսօր տարրական դպրոցում կիրառվում են բազմաթիվ նոր տեխնոլոգիաներ, մոտեցումներ և մեթոդներ, որոնք ուղղված են արդյունավետ ուսուցման կազմակերպմանը և ամրագրված են չափորոշչային պահանջներին, որոնց մեջ տարրական դպրոցի համար էական նշանակությամբ առանձնանում է ընթերցանության ճիշտ, նպատակամետ և արդյունավետ կազմակերպման պահանջը [1]: Մեր հետազոտության նպատակը ընթերցանության հանդեպ կայուն պահանջ կամ ամենօրյա ընթերցանության սովորույթ ձևավորելու խնդիրն է, ընթերցասիրության, ընթերցածը ընկալելու, ընթերցանությունը որպես հաղորդակցման միջոցի և հոգևոր հարստացման աղբյուրի ձևավորումը և զարգացումը, որոնք շատ արդիական են՝ սահմանված հանրակրթության պետական չափորոշիչով : Ընթերցանության կազմակերպման գործընթացը մի ամբողջական շղթա է, որի յուրաքանչյուր օղակ լուծում է որոշակի խնդիրներ, որոնց մեջ ամենաբարդը ընթերցող աշակերտի ձևավորման խնդիրն է, որի համար հարկավոր է ընթերցել սովորեցնել, իսկ ընթերցելը իմաստավորման գործընթաց է, երբ ձևավորվում է ակտիվ, կառուցողական, ստեղծագործական, բարձրակարգ մտածողություն: Տարրական դպրոցում <<ընթերցելու կարողություն>> հասկացությունը ենթադրում և պայմանավորում է ոչ միայն ընթերցած նյութի բովանդակության հասկացում և ըմբռնում, այլև կարդացածի հուզական ընկալում. .գիրքը այս տարիքում պետք է ընկալվի իբրև արվեստի նմուշ: Այսօր ընթերցանությունն ընկալվում է ոչ թե որպես սովորելու առարկա, այլև մտածելու և սովորելու գործիք ,որը ներառում է լուռ ընթերցանությունը, մտքերի փոխանակումը ընթերցածի շուրջ, ընթերցվող նյութի հետ կապված տարատեսակ աշխատանքները: Լավ ընթերցել հասկացությունը ենթադրում է հետևյալ բաղադրիչները՝ ճիշտ կարդալ, հասկանալով կարդալ, սահուն կարդալ, արտահայտիչ կարդալ, արագ կարդալ [2]:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: <<Տարրական դասարանների Մայրենիի դասերի գլխավոր նպատակը բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ երեխաներին կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, ընթերցողական կարողություններ ձևավորելը, զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը>> [3] :

..: Եթե ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդական ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի զարգացման միջոց: Այդ իսկ պատճառով ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը դարձվում է կարդալու, մասնավորապես հասկանալով կարդալու, կարողության ձևավորմանը:

Բնագրի առաջին ընթերցման ժամանակ աշակերտները ընթերցած նյութի բովանդակության մասին ընդհանուր մակերեսային պատկերացում են կազմում, այդ պատճառով էլ կարևոր է բնագրի՝ որոշակի հանձնարարականների վերընթերցումը, որի ժամանակ երեխաները պետք է ինչ-որ նորություն գտնեն, բացահայտեն նոր փաստեր, երևույթներ:[7]-ում հեղինակը նշում է, որ ընթերցանությունն օգնում է իրազեկ դառնալ գոյություն ունեցող խնդիրների մասին՝ ցույց տալով դրանց հաղթահարման ուղիները: Ընթերցանությունը ինքնավստահություն է ապահովում և օգնում է ազատվել սեփական անլիարժեքության ու սահմանափակ լինելու զգացումներից:Ընթերցանությունն ամրապնդում է համոզմունքներն ու հայացքները, մտածելակերպ ու աշխարհայացք է ձևավորում , անհատին պատրաստում է ընդունել նորը, ինչպես նաև կարծիքների փոխանակման ու քննարկումներին մասնակցելու արվեստ է սովորեցնում: Եվ ի վերջո, ընթերցանությունը հնարավորություն է տալիս ծանոթանալ գրականության գոհարների հետ:

ՈՒսումնասիրություններից պարզել ենք, որ եթե սովորողը չի հասկանում ընթերցած նյութի բովանդակությունը, կորցնում է հետաքրքրությունը, ուստի կարևոր է, որ նա ընկալի ընթերցածը, հասկանա հեղինակի գաղափարը, ապրումակցի գրական ստեղծագործության հերոսներին, երևակայության միջոցով ներթափանցի նկարագրվող դեպքերի և իրադարձությունների մեջ, այդ ամենը կարողանա տեսնել և հասկանալ որպես իրական կյանքի գեղարվեստական դրսևորումներ: Ընթերցանությունը դառնում է ակտիվ գործընթաց, երբ աշակերտը մտածում է կարդացածի բովանդակության մասին: Ընթերցելիս աշակերտի միտքը դեգերում է շրջապատի տպավորությունների դաշտում, և արդյունքում չի ընկալվում կարդացածի իմաստը: Բնագրի շուրջ տարվող ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է անձի զարգացման միջոց: <<Ընթերցանությունը երեխային հնարավորություն է տալիս հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները, իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման համար>>[6, 34]:

Շատ կարևոր է ընթերցվող նյութի ճիշտ ընտրությունը, այն պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Այդ կերպ ընթերցանությունը հիմք կհանդիսանա կայուն գիտելիքների հաղորդման, դասի նպատակին համապատասխան կարողությունների և հմտությունների մշակման համար: Կարևոր են նաև դիպուկ, նպատակային հարցադրումները, որոնք կենտրոնացնում են աշակերտների ուշադրությունը և խթանում մտածողությունը:Միաժամանակ նրանց համար հնարավորություն է ստեղծվում բացատրելու իրենց գաղափարները, արտահայտելու կարծիքներ, ներկայացնելու նաև չիմացածը:

Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Մենք հաճախ ենք ուրախանում, վիրավորվում, կարեկցում և խղճում ինչ- որ մեկին, վեհ զգացմունքներ ունենում հանդիսավոր ձևով արտասանած բանաստեղծությունից, լսած սրտառուչ հեքիաթից ու

պատմվածքից: Երեխան գրական ստեղծագործության հերոսի, նկարագրած դեպքերի և իրադարձությունների ազդեցության ներքո աստիճանաբար ապրում է այս կամ այն վիճակն ու համապատասխանաբար յուրացնում բարոյական հասկացություններ և զգացմունքներ: Երեխաների մեջ զարգացնել բարոյական զգացմունքներ՝ նշանակում է ձևավորել ուրախանալու, տխրելու, հպարտանալու, ամաչելու կարողություն, այսինքն՝ դրսևորել որոշակի վերաբերմունք սեփական և ուրիշների արարքների նկատմամբ, գնահատել դրանք՝ ելնելով բարոյականության չափանիշների սեփական պատկերացումներից: Բարոյական չափանիշներն այն ժամանակ են դառնում անձի սեփականությունը, երբ դրանք ընկալվում են ոչ միայն մտքով, այլև հոգով, այսինքն՝ վերածվում են զգացմունքի:

Արտահայտիչ կարդայը գործիք է երեխայի զգացմունքների դաստիարակման համար: Գեղարվեստական ստեղծագործությունը կարելի է այնպես ընթերցել, որ երեխայի աչքերը փայլեն, հուզմունքից շունչը պահի:Այդպիսի ընթերցումն ազդում է ավելի լավ, քան գեղարվեստական ստեղծագործության և նրա հերոսների մասին ցանկացած քննարկում,քանի որ կարդալու ուսուցումը տարրական դասարաններում հիմնված է ստեղծագործության վերարտադրման, վերլուծության և ընկալման վրա:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ընթերցանության դասաժամերին երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել տեքստը, կարողանան երևակայության միջոցով ներթափանցել հեղինակի նկարագրած կյանք,հաղորդակցվել նրա հետ, ապրել այն որպես իրողություն, ապրումակցել հերոսներին՝ այդ ամենը համեմատելով իրենց կյանքի և զգացմունքների հետ: <<Դիտել, մտածել, դատողություններ անել, հպարտանալ ստեղծածով և դրա մեջ գտնել երջանկություն, դրանով հարստացնել սեփական հոգևոր աշխարհը, սրտին մոտ ընդունել ուրիշ մարդկանց վիշտն ու բերկրանքը, ապրել նրանց ճակատագրով՝ որպես

խորապես անձնական գործ>> [7]: Պետք է սովորեցնել այնպիսի ընթերցանություն, որ երեխան կարդալով մտածի, որ ընթերցանությունը դառնա երեխայի համար գիտելիքներ ձեռք բերելու գործիք և միաժամանակ հաղորդակցման միջոց: Ընթերցանությունը հաղորդակցման միջոց է: <<Այն ճշմարտությունը որոնելու ուղղորդող երկխոսություն է հաստատում ընթերցողի և հեղինակի միջև, իսկ ճշմարտությունը միշտ հեռանում է, հարկավոր է լինում փնտրել ու հասնել նրան՝ ընդունելով նախնիների փորձը, ավելացնելով սեփականը: Չհասկանալով գրածը, հեղինակի աշխարհայացքի արմատները, չհասցնելով նրա բովանդակությունը սեփական գիտակցության մեջ՝ ընթերցողը չի կարող ամբողջովին գնահատել ստեղծագործության խորությունը>>[4,3]: Ընթերցանությունը հաղորդակցման միջոց չի դառնա, երբ մտնես տեքստի մեջ ու չվերցնես մտածելու համար քեզ մեկնված սերմը: Հայացքդ սահեցնելով տեքստի վրայով, քաղելով մտքի ու գաղափարների դրվագներ՝ համարում ես, որ գտել ես ճշմարտությունը,սակայն դա այդպես չէ, հաղորդակից չես դառնում հեղինակի մտքերին:

Հեղինակի մտքերին հաղորդակից դառնալու համար կարևոր է հասկանալով կարդալը, որի համար սովորողը պետք է տիրապետի կարդացածը վերլուծելու կարողությանը,որի հիմքերը դրվում են տարրական դասարաններում: Վերլուծել կարդացածը, նշանակում է ընկալել ստեղծագործության գեղագիտական և բարոյական արժեքները, խորհել ընթերցածի շուրջը, ապրումակցել հերոսներին, գնահատել նրանց արարքները: Այս իմաստով շատ կարևոր է տարրական դպրոցում կազմակերպվող ընթերցանության դասերն անցկացնել հարցադրումների միջոցով: [8,12]-ում <<Արջն ու գիրքը>> տեքստի կարդացածը ընկալելու համար շատ կարևոր են ճիշտ հարցադրումները: Երկրորդ դասարանի սովորողը անմիջական է շփվում հեղինակի մտքերին, ընթերցածը ընկալում է պարզ հարցադրումներով՝ Արջն ինչ էր որոնում անտառում: Ինչու: Ինչ գտավ, ինչ արեց:

[9, 76]-ում <<Անտառն ու քամին>>առակի ընկալման համար հարցադրումները կրում են ստեղծագործական բնույթ՝Ինչու անտառը չվախեցավ քամուց: Ինչով է անտառը տարբերվում միայնակ ծառից:Ինչ է միասնությունը: [10, 138]-ում <<Խայծը>> պատմվածքի ընկալման համար

առաջադրվում են տրամաբանական, վերլուծական, համեմատման, համադրման հարցեր: Քո կարծիքով ով է հերոսը, ինչ ճակատագիր է սպասվում նրան; Ինչպես ավարտվեց պատմվածքը, դու սպասում էիր այդպիսի ավարտի: Բնութագրիր ձկանը և որդին՝ հիմնավորելով բնագրի համապատասխան տողերով: Հորինիր երկխոսություն ձկնորսի և խայծի միջև:

[1]-ում հիմնական ուշադրությունը դրվում էր երեխաների վարժ և արագ, սակայն ոչ իմաստալից ընթերցանությանը, երբ երեխան կարդում էր լոկ վարժ, սահուն կարդալու համար, նրա հայացքը սահում էր տողերի վրայով, և նա նույնիսկ չէր էլ փորձում հասկանալ կարդացածի բովանդակությունը: Սրա տարածված օրինակներից մեկը ուսումնական առաջադրանքի պահանջները անուշադիր կամ ընդհանրապես չկարդալու դեպքն էր, երբ սովորողը առաջադրանքի կատարման դժվարություն էր ունենում ոչ այնքան չիմացության, որքան կարդալ չիմանալու պատճառով: [2]-ում առաջադրվում է, որ ուսուցիչը ավելի շատ ուշադրություն դարձնի հասկանալով ընթերցմանը,կարդացածը հասկանալու որակի ձեռք բերմանը, բացահայտի ճիշտ և հաջողակ ընթերցող լինելու գաղտնիքը, պարբերաբար բացատրի և պարզաբանի, թե ինչպես կարելի է հաղթահարել անծանոթ, խրթին տեքստը, ընթերցածի մեջ հիմնականը երկրորդականից տարբերելու, իր համար անհասկանալի միտքը և հարցը ձևակերպել առանձնացնելու խնդիրները: Պահանջի ճիշտ ընթերցման որակի ձևավորման համար կարելի է կիրառել բազմաթիվ մեթոդներ ու հնարներ,սակայն հաջողության գրավականը հետևողականությունն է ու շարունակականությունը այնքան ժամանակ, քանի դեռ չի ձևավորվել այդ որակը:

Հենց առաջին դասարանից, ընթերցել սովորելու առաջին իսկ օրից երեխային պետք է ընտելացնել գրքի մեջ տեսնել զրուցակից, որի հետ կարելի է զրուցել առանց մեծահասակի օգնության: Նպատակահարմար է, օրինակ, գրքի հետ ծանոթությունը սկսել այնտեղ զետեղված հանելուկների, նկարների, պատմությունների մասին հետաքրքրություն ծնող առաջադրանքների կատարումով: Նմանօրինակ աշխատանքները սովորողի մոտ առաջացնում են այնպիսի մտայնություն, թե ընթերցելով կարելի է իմանալ շատ բան: Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ծնվում է նաև տեքստի հետ

տարվող տարաբնույթ աշխատանքների միջոցով: Դրանցից են, օրինակ, դերերով ընթերցանությունը, տեքստի կամ նրա որևէ հատվածի բեմականացումը, տեքստի ամենաերկար, ամենակարճ բառերի փնտրումը, տեքստի որևէ հատվածին համապատասխան նկարի առանձնացումը, անհասկանալի բառերի ընդգծումը և այլն: Նման դեպքերում աշակերտը հաղորդակից է դառնում հեղինակի մտքերին, տեքստը դառնում է պարզ ու հասկանալի:

ՈՒսուցման մեթոդիկան հիմնված է <<Կարդալ՝ նշանակում է ստեղծագործության իմաստը հասկանալ>> սկզբունքի վրա: Հաճախ ուսուցիչներն ավելի շատ ուշադրություն են դարձնում երեխաների կարդալու արագության զարգացման վրա և բաց են թողնում ամենակարևորը՝խոսքի արտահայտչամիջոցների ընկալումը: Կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց պետք է մշակել արտահայտիչ խոսքի և կարդալու կարողություններ: Այս աշխատանքը հարկավոր է սկսել դեռևս այբբենական շրջանում՝ երեխաներին սովորեցնելով տիրապետել խոսքի տեխնիկային՝ շնչառություն, ձայն, առոգանություն: Ընթերցելու ժամանակ անհրաժեշտ է ձայնի տպավորիչ երանգով հաղորդել հերոսի ապրումների յուրահատուկ կողմերն ու արտահայտչական միջոցների առանձնահատկությունները: Այս դեպքում երեխան կարդացողի դեմքի արտահայտությունից և արտասանության հնչերանգից գուշակում է հերոսի ձգտումներն ու նպատակները: Եթե ընթերցանությունը երեխայի համար տպավորիչ ու հրապուրիչ լինի, ինչպես խաղը, ապա նա սիրով ու հաճույքով կկարդա և կընկալի կարդացածի բովանդակությունը: Կարևոր է նաև , որ ընտրված գիրքը համապատասխանի սկսնակ ընթերցողի հակումներին և տարիքային առանձնահատկություններին: Յուրաքանչյուր երեխա ունի իր հետաքրքրությունները, որոնք պետք է հաշվի առնել ինքնուրույն ընթերցանության ունակություններ զարգացնելու համար:

Կրտսեր դպրոցականի համար դաստիարակչական մեծ նշանակություն ունի գրքի պատկերազարդումների դիտումը, որն օգնում է երեխային հասկանալ և հիշել կարդացածը: Շատ պատկերազարդումներ հնարավորություն են տալիս պատկերացնել բնության այնպիսի երևույթներ և առարկաներ, որոնք երեխան

չի կարող տեսնել անմիջականորեն: Այդ ձևով երեխան հաղորդակցվում է նկարի բովանդակության հետ, ավելի հեշտ ու արագ ընկալում իմաստը:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Սովորենք կարդալ, որպեսզի այն օգտագործենք աշխարհընկալման համար, որպեսզի զգանք, մտածենք, վերապրենք և ինչ-որ ժամանակ սկսենք ինքներս ապրել: <<Գիրքը մեծ դեր է խաղում երեխայի հոգևոր կյանքում, բայց միայն այն ժամանակ, երբ երեխան լավ կարդալ գիտի>> [5, 215]:Հետազոտություններից պարզել ենք, որ պետք է հասնել այն բանին, որ անհատական ընթերցումը դառնա երեխայի հոգևոր պահանջմունք: Ընթերցանությունը որպես հոգևոր հարստացման աղբյուր չի հանգեցնում կարդալու կարողությանը, այդ կարողությամբ դա միայն սկսվում է: Երեխան կարող է սահուն, անսխալ կարդալ, սակայն գիրքը նրա համար չի դառնում այն ուղին,որը տանում է դեպի մտավոր, բարոյական և գեղագիտական զարգացման գագաթը: <<Կարողանալ կարդալ, նշանակում է լինել զգայուն բառի իմաստի և գեղեցկության, նրա ամենանուրբ երանգների նկատմամբ: Կարդում է այն աշակերտը, որի գիտակցության մեջ բառը խաղում է: Ընթերցանությունը մի պատուհան է, որի միջով երեխաները տեսնում և ճանաչում են աշխարհը և իրենք իրենց: Դեպի երեխայի սիրտն ու գիտակցությունը տանող ուղին գալիս է գրքից, կարդացած բառից դեպի բանավոր խոսքն ու արդեն երեխայի հոգևոր աշխարհը մտած բառից դեպի գիրքը, ընթերցանությունը>>[5, 216]:

Հուզական-գեղագիտական նախապատրաստումը կարդալուն կարևոր պայման է այն բանի, որ երեխան կարդալ սովորի ոչ թե գնահատական ստանալու, այլ որ կարդալ չիմանալը նրան զրկում է շատ ուրախություններից: Առաջին դասարանից սկսած ընթերցանությունը պետք է դառնա երեխայի հոգևոր պահանջմունքը, որ այն չհանգեցնի վարժությունների, որոնք նպատակ են հետապնդում մշակել բառը արագ ընկալելու և արտասանելու տեխնիկայի: <<Աշակերտի հոգևոր աշխարհը կարող է մտնել միայն այն, ինչը

համապատասխանում է նրա մտավոր, հուզական, գեղագիտական զարգացման մակարդակին և միաժամանակ նպաստում նրա հետագա զարգացմանը: ՈՒսուցչի գլխավոր խնդիրն է ճիշտ ընտրել,թե ինչ կարդալ: Ընթերցումը ամեն մի երեխայի համար կրկնողական վարժություն չէ, այլ վառ պատկերների անձնական խոր վերապրում, ամեն մի երեխա բառի մեջ դնում է իր անհատական ընկալումը>> [7, 31]: Երեխան յուրաքանչյուր բառը արտասանում է տարբեր ձևով, ամեն մեկի մոտ բառը ստանում է իր երանգավորումը, որն արտահայտում է զգացումների, ընկալումների, պատկերացումների նրբությունը: Հուզականորեն վառ անհատական ընթերցանությանը նախապատրաստելու գործում հատկապես կարևոր է այն, որ երեխան շատ անգամ լինի մտքի աղբյուրի մոտ, զգա բառի գեղեցկությունը, որ բառը մտնի նրա հոգևոր կյանքի մեջ: <<Թող երեխան քիչ կարդա, բայց յուրաքանչյուր գիրք պետք է խորը հետք թողնի նրա հոգում և գիտակցության մեջ, որ հայտնաբերի ավելի նոր հոգևոր հարստություններ: Այստեղ շատ կարևոր է , որ երեխան հաճույք և բավականություն ստանա արտահայտիչ ընթերցանությունից :Բառի ուժն ու գեղեցկությունը դրսևորվում է նրա հնչման մեջ, այդ պատճառով շատ կարևոր է, որ բառի հուզական երանգավորման զգացումն առաջանա բարձրաձայն, արտահայտիչ ընթերցանության ընկալումից>> [5, 218]:

Յուրաքանչյուր երեխայի մեջ պետք է նշակել կարդալու անհրաժեշտ տեխնիկա: Մեր մտահոգությունն է, թե ինչու երեխաները արտահայտիչ չեն ընթերցում, ինչու մանկական ընթերցման մեջ հազվադեպ կարելի է լսել հուզական երանգներ: Այն պատճառով է, որ շատ դեպքերում ընթերցանությունը կտրվում է երեխաների հոգևոր կյանքից, մտքերից, զգացումներից,պատկերացումներից: Երեխային հուզում է մի բան, բայց նա կարդում է մեկ այլ բանի մասին: Ընթերցանությունը երեխայի կյանքը հարստացնում է միայն այն դեպքում, երբ խոսքը հասնում է նրա սրտի նվիրական անկյունները: Որքան երեխան ավելի վաղ է սկսում կարդալ, որքան ընթերցանությունը անսահմանափակ չափով է կապված նրա ամբողջ հոգևոր կյանքի հետ, այնքան ավելի բարդ են այն մտածողական պրոցեսները, որոնք տեղի են ունենում ընթերցանության ժամանակ, այնքան ընթերցանությունն

ավելի շատ բան է տալիս մտավոր զարգացման համար:Շատ վաղ հասակում կարդալ սովորած երեխայի մոտ մշակվում են շատ արժեքավոր կարողություններ: Կարդալով երեխան գամված չէ բառին, նա հնարավորություն ունի վայրկյանի մի ինչ-որ մասի ընթացքում հեռացնելու իր հայացքը գրքից և այդ ժամանակ մտածում, հասկանում է, թե ինչ պետք է ասի բարձրաձայն: <<Կարդալը փոքրիկ դպրոցականի համար բարդ գործընթաց է՝ մտածողության, հիշողության, կամքի, ուշադրության և զգացմունքների դրսևորումով: Ընթերցանության մեջ հմտանալու համար երեխան պետք է կարողանա աչքի մեկ ընդգրկումով տեսնել ընթերցանության հիմնական հատվածը>> [7, 45]: Այսպիսով, երեխան միաժամանակ կարդում,մտածում, իմաստավորում և ըմբռնում է: Բառը երեխայի համար պետք է լինի ոչ թե պարզապես տվյալ իրի, առարկայի, երևույթի անվանումը, այլ իր մեջ բովանդակի հուզական երանգ:

Հեքիաթը, խաղը, երևակայությունը մանկան մտածողության, ազնիվ զգացմունքների և ձգտումների կենսատու աղբյուրներն են: Բազմամյա փորձը ցույց է տալիս, որ գեղագիտական, բարոյական և հոգեկան զգացմունքները, որոնք երեխայի հոգում ծնվում են հեքիաթային կերպարների տպավորության տակ, ակտիվացնում են միտքը: Ընթերցելով հեքիաթը՝ երեխան ճանաչում է աշխարհը ոչ միայն մտքով, այլ նաև սրտով: Եվ ոչ միայն ճանաչում է, այլև արձագանքում է շրջապատող աշխարհի իրադարձություններին ու երևույթներին, արտահայտում իր վերաբերմունքը բարու և չարի նկատմամբ: Հեքիաթում ձեռք են բերում առաջին պատկերացումները արդարության և անարդարության մասին: Բառը, որը բացահայտում է ազնիվ գաղափարներ, մանկան հոգում ընդմիշտ թողնում է մարդկայնության ուղիներ, որոնցից ձևավորվում է խիղճը: [8, 88] -ում սովորողները իմանում են ազնվության, բարու, արդարության , միմյանց օգնելու, պատրաստակամության մասին, թե ինչպես մեկը մյուսին օգնելու, աջակցելու շնորհիվ աղվեսը կարողացավ հասնել իր պոչին:

Երեխայի սրտում բարոյական կերպարը ծնվում է այն ժամանակ, երբ երեխան կարծես դիտում է ինքն իրեն, համեմատում իրեն նրա հետ, ով նրա պատկերացման մեջ բարոյական գեղեցկության համոզմունքներին

հավատարիմ լինելու,արիության, դժվարությունների առաջ անսասանության օրինակ է: Ընթերցանության շնորհիվ երեխան վերապրում է ուրիշների զգացմունքները, իրեն զգում այն մարդու իրավիճակում, ով կարեկցանքի, օգնության, սրտացավ հոգատարության կարիք ունի: ՈՒրիշի վիշտը պետք է դառնա երեխայի անձնական վիշտը, ստիպի նրան մտածել այն մասին, թե ինչպես օգնի դրա կարիքն ունեցողին: Երեխան, որը չի ճանաչել մարդկային կյանքի բոլոր կողմերը, երջանկությունը և վիշտը, երբեք չի կարող զգայուն և կարեկից լինել:[9, 142]-ում <<Թե ինչպես Չիպոլինոն խաբեց Մաստինո շանը>>տեքստի ընկալումն ավելի ցայտուն լինելու համար կազմակերպեցի նք դատավարություն-խաղ- բեմականացում, որտեղ դատապարտեցինք պարոն Լոլիկին իր վատ արարքների համար, նրա համար սահմանեցին դատավճիռ:

Պետք է արժեքավոր լինի գրքի սյուժեն, հերոսներն այնպես կերտված լինեն, որ ընթերցողը նրանց ապրումներին հաղորդակից դառնա, լինեն զարմանալի, հիանալի անհատականություններ, տեքստը լինի խոր, ասելիք ունենա, ճանաչողական լինի: Եթե ընթերցանությունը վսեմացնում է երեխայի հոգին, ներշնչում է ազնիվ ու բարի զգացմունքներ, նշանակում է գիրքը լավն է ու ստեղծված է վարպետի ձեռքով: Երեխաները հետաքրքրասեր են ու ստեղծագործող, և հենց այդ աշխատանքի ընթացքում է բացահայտվում, ձևավորվում անձը: Գեղարվեստական ստեղծագործության լիարժեք ընկալման, երեխայի գեղագիտական, բարոյական պատկերացումների զարգացման և հոգևոր աշխարհի հարստացման համար կարևոր նշանակություն ունեն դասի ընթացքում և տանը իրականացվող գրական ստեղծագործական աշխատանքները: Կարևոր է, որ երեխաները կարողանան տեսնել աշխարհը և մարդկանց իրենց հայացքով ու հոգով:

ԳԼՈՒԽ 4, ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ժամանակակից երեխան իր ճանապարհին հանդիպում է լուրջ խնդիրների և որքան շատ խորհի դրանց շուրջ, այնքան ավելի լավ: Այդ խնդիրները հեշտությամբ կհաղթահարեն գրական ստեղծագործություններին ուսուցչի

ուղղորդմամբ հաղորդակցվելու դեպքում: Յուրաքանչյուր ուսուցչի անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն, սահուն, արտահայտիչ ընթերցողական կարողությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի անձի զարգացման և կրթության հարցում: Դասվարները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը: Իսկ ավելի դժվար է ձևավորել իսկական ընթերցող: Չէ որ տառերի կապակցմամբ բառ կազմելը և կարդալը դեռևս չի նշանակում դառնալ ընթերցող: Գլխավորը ընթերցանության կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացումը, իսկ զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության: Ընթերցելով և վերլուծելով ստեղծագործությունները՝ երեխան պետք է խորհրդածի ճշմարիտի և սխալի, սիրո և ատելության, բարու և չարի, մարդու հնարավորությունների ու աշխարհում նրա տեղի մասին: Հարկավոր չէ տրամադրել նրան, որ ինքը դեռևս փոքր է: Միաժամանակ պետք չէ նրան վախեցնել կամ բարդացնել նրա կյանքն այդպիսի հարցերով: Շատ կարևոր է ընթերցվող նյութի ճիշտ ընտրությունը, այն պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Այդ կերպ ընթերցանությունը հիմք կհանդիսանա կայուն գիտելիքների հաղորդման, դասի նպատակին համապատասխան կարողությունների և հմտությունների մշակման համար: Կարևոր են նաև դիպուկ, նպատակային հարցադրումները, որոնք կենտրոնացնում են աշակերտների ուշադրությունը և խթանում մտածողությունը:Միաժամանակ նրանց համար հնարավորություն է ստեղծվում բացատրելու իրենց գաղափարները, արտահայտելու կարծիքներ, ներկայացնելու նաև չիմացածը: Լուրջ ջանքեր պետք է գործադրի փոքրիկ աշակերտը՝ կարդացածի միտքն ու իմաստն ընկալելու համար: Այստեղ էլ հենց կարևորվում են ուսուցչի մեթոդական պատրաստվածությունը և աշխատանքների նպատակային պլանավորումը: ՈՒսուցման վաղ տարիքից ուսուցիչները և աշակերտները պետք է գիտակցեն, որ ընթերցանությունը միջոց է անձի դաստիարակության, ընդհանուր զարգացման, գիտելիքների ձեռք բերման համար, որը պետք է դառնա ուսումնական բոլոր առարկաների պահանջների յուրացման հիմք, մշակի ինքնուրույն ընթերցանության

կարողություններ և հմտություններ, հետաքրքրություն առաջացնի գրքի նկատմամբ: Եթե ուսուցիչն աշակերտներից պահանջում է ընդամենը վերհիշել ու վերարտադրել իրենց կարդացածը, ապա երբեք չի կարողանա պարզել,թե տեքստի ինչպիսի մակարդակի ընկալում է տեղի ունեցել: Տպագիր բառերը կարդալը և մտապահելը դեռևս ակտիվ ընթերցանություն չէ: Որպեսզի կարդացածն օգտակար լինի, դրա արդյունքում ընթերցողի իմացական ոլորտում փոփոխություններ պետք է տեղի ունենան: ՈՒսուցիչների առաջնահերթ խնդիրն է դառնում օգնել աշակերտներին՝ զարգացնելու ակտիվ ընթերցողական կարողություններ:

Ընթերցանության դասերին երեխաների ինքնուրույն գործունեության զարգացմանը նպաստում են դիդակտիկ խաղերը, որոնք միշտ էլ հետաքրքրել են երեխաներին:Այդ ընթացքում երեխաները ցուցաբերել են իմացական և զգայական ակտիվություն: Խաղային գործունեությունը խթանել է նրանց երևակայությունը, մտածողությունը, խոսքը, զգացմունքները, ամրակայվել է հիշողությունը: Բացի դրանից, խաղային իրավիճակը նպաստում է, որ մասնակիցները հաղորդակցվեն և ակտիվորեն համագործակցեն միմյանց հետ: Խաղի մեջ յուրաքանչյուր մասնակից ունի իր <<դերը>> և ամբողջովին պատասխանատվություն է կրում դրա համար: Այս իմաստով հատկապես առանձնանում են դերային խաղերը, որոնց ընթացքում երեխան ընդունում է որևէ սոցիալական դեր: Նա ապրում է մի իրավիճակ, որը չի եղել իր կյանքի ընթացքում, և դա դաստիարակում է նրան, սովորեցնում ապրել հասարակական կյանքով: Առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ կլինի ուսումնական գործընթացը, եթե գիտելիքների կրկնությունը կամ տեքստի վերարտադրումն իրականացվեն <<Բարձունքի նվաճումը>>, <<Գրական ֆուտբոլ>>խաղերի տեսքով: Դերային խաղերի ընթացքում պահանջվում է դերային կերպարանափոխություն և ներթափանցում ստեղծագործության հերոսի կերպարի մեջ, ձևավորվում է պատասխանատվություն ընդհանուր գործի նկատմամբ, հնարավորություն է ստեղծվում յուրաքանչյուր աշակերտի տրամադրել իր հոգուն և ուժերին հարազատ ստեղծագործական աշխատանք: Կարելի է երեխաներին սովորեցնել կառուցել չափածո խոսքի նմուշ, արտահայտել իրենց զգացմունքները և <<նկարել>>բառերով

արտահայտված պատկերներ, որոնք կլինեն իրենց երևակայության արգասիքը: կարևոր է , որ նրանք կարողանան տեսնել աշխարհը և մարդկանց իրենց հայացքով և հոգով: Այդ կերպ նրանք ձեռք կբերեն ինքնգիտակցման, ինքնարտահայտման, գեղագիտական և բարոյական հատկանիշների ու արժեքների զարգացման միջոց ու հնարավորություն: Դասերի ընթացքում սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներ իրականացվում են անդադար՝ աստիճանաբար բարդացնելու սկզբունքով: Կրտսեր դպրոցական տարիքը հատկապես այն շրջանն է, երբ երեխան անվերապահորեն հավատում է այն ամենին, ինչ ասում են մեծերը: Երեխաների բարոյական պատկերացումները, որոնք նա ստանում է ընտանիքում, մանկավարժական գործունեության միջոցով դառնում են համոզմունք: Այսինքն՝ձևավորվում են մարդու բարոյական համոզմունքների հիմքերը:

Տեքստի շուրջ աշխատանքը հարկավոր է կազմակերպել այնպես, որ բոլոր սովորողները պատկերացնեն, գիտակցեն ու ապրեն ներկայացված իրադարձությունները, հասկանան բովանդակությունը, գեղարվեստական միջոցները և ստեղծագործության հիմնական իմաստը, որով էլ պայմանավորված է դասի հիմնական փուլերի կառուցումը: Դրանք են սովորողների նախապատրաստումն ընթերցանությանը,ստեղծագործության առաջին ընթերցում, աշխատանք տեքստի շուրջ և ընդհանրացում, պատկերացումների ամրապնդում և ընթերցած տեքստի գլխավոր իմաստի ընկալում: Նոր նյութի ընթերցանության նախապատրաստումը դասի կարևոր տարրն է, որի ժամանակ սովորողներն անմիջապես թափանցում են թեմայի մեջ, համակարգում սեփական կենսափորձը, զգայապես տրամադրվում նոր նյութի ընկալմանը: Ճիշտ կազմակերպված մուտքը նպաստում է, որ սովորողներն առաջադրվող թեմայի նկատմամբ դրսևորեն հետաքրքրություն և որոշեն ընթերցման նպատակը: Ընթերցվող նյութի ակտիվ և ինքնուրույն ընկալմանը նպաստում են նախնական առաջադրանքները, հատկապես արդյունավետ են այն հարցադրումները, որոնց պատասխանելիս պետք է վերհիշել ուսումնասիրած դասանյութերը: Աշակերտների ինքնուրույն կարողությունների զարգացման միջոց են

տեքստին վերաբերող հարցերի բնույթը , դասանյութի վերջում տրվող հարցերն ու առաջադրանքները, որոնց կատարումը աշակերտներին մղում է ինքնուրույն վերլուծությունների՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման, համեմատության, խմբավորման միջոցով: Կարևոր է, որ աշակերտները կարողանան ընթերցված նյութերից փաստեր ու տեղեկություններ քաղել և ապացուցելով դրանք՝ զարգացնեն ընդհանրացումներ և համադրումներ անելու կարողությունները: Աշակերտը պետք է կարողանա առանձին հատվածներից տեղեկատվություն քաղել և գուշակել ստեղծագործության բովանդակության հետագա զարգացումները, իսկ ընթերցանության ընթացքում վերջնականապես եզրակացություններ կատարել հաղորդվող նյութի բովանդակության վերաբերյալ: Նման պարագայում աշակերտը համոզվում է, որ իր կանխատեսումները հաճախ կարող են չհամընկնել ստեղծագործության բովանդակությանը: Այս անհամապատասխանությունն աշակերտներին կմղի ստեղծագործության առավել ուշադիր և գիտակցված ընթերցմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական ստեղծագործության լիարժեք ընկալման, երեխայի գեղագիտական, բարոյական պատկերացումների զարգացման, հաղորդակցման և հոգևոր աշխարհի հարստացման համար կարևոր նշանակություն ունեն դասի ընթացքում և տանը իրականացվող գրական ընթերցումները, պարզ և հստակ շարադրելը սեփական մտքերը, համապատասխան բառերով արտահայտել իր հույզերն ու ապրումները, դրսևորել խոսքի մշակույթ և, ընդհանրապես, հաղորդակցվել, որը բարդ ու դժվարին գործընթաց է, որն ուսուցչից պահանջում է մեծ ջանքեր, լարված ու հետևողական աշխատանք,և , որ ամենակարևորն է, արդյունավետ միջոցներ ու մեթոդներ: Կարևոր է, որ երեխաները կարողանան տեսնել աշխարհը և մարդկանց իրենց հայացքով ու հոգով, իսկ գրական ստեղծագործության ճիշտ ընտրության և բնագրի շուրջ տարվող ճիշտ աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է հաղորդակցման միջոց և անձի հոգևոր հարստացման աղբյուր, որն էլ ապահովում է երեխայի մտավոր և բազմակողմանի զարգացումը, հարստացնում է բառապաշարը, կապակցված խոսքը: Ընթերցանությունը հետաքրքրություն է առաջացնում գիտելիքների հիմնական աղբյուր հանդիսացող գրքի նկատմամբ, նպաստում սովորողների հուզական – գեղարվեստական զարգացմանը:Սովորողների մի մասը կարդացածն ընկալում են միայն սյուժետային հիմքով, մյուսները կարող են ընդհանրացումներ կատարել, իսկ առավել զարգացած երեխաները <<տեսնում են>> նաև ենթատեքստը և գաղափարը: Ահա յուրացման այս վերջին մակարդակն է, որ հաճախ չի ապահովվում, որը չափորոշչային պահանջ է:

Կարևոր է այնպիսի հարցերի և առաջադրանքների կատարումը, որոնք պահանջում են դատողություններ անել հերոսների, նրանց արարքների վերաբերյալ, հայտնել սեփական կարծիքը, մեկնաբանել, գտնել երևույթների և դեպքերի միջև պատճառահետևանքային կապերը, դատողական խոսք կառուցել, կկարողանան ընկալել ստեղծագործությունում արտահայտված գլխավոր գաղափարը և համարժեք վերաբերմունք դրսևորել: Գրական ստեղծագործության ընկալման որակական ցուցիչ է աշակերտ-ընթերցողի կողմից գեղարվեստական պատկերը տեսնելու և

զգալու, հեղինակի մտահղացումներին հարորդակից լինելու, հերոսներին ապրումակցելու կարողությունները: Ներկայիս ընթերցանության ուսուցման մեթոդիկան բնութագրվում է աշխատանքների ինքնուրույն աշխատանքի չափով:Այս իմաստով ինքնուրույն աշխատանքը կազմակերպելիս բավարարվում են ոչ միայն ընթերցվող նյութը կարդալով ու այն վերլուծելով, այլև մտահոգվում են որոշակի կարողունակությունների ձևավորմամբ՝ կարդալ, բնագրի վրա աշխատել, խոսքային իրավիճակներում կողմնորոշվել, գրքից օգտվել: Ընթերցել սովորեցնելու առաջին իսկ օրից երեխային պետք է ընտելացնել գրքի մեջ տեսնել զրուցակից, որի հետ կարելի է զրուցել առանց մեծահասակի օգնության, գիրքը նրա համար կդառնա այն ուղին, որը կտանի դեպի մտավոր, բարոյական և գեղագիտական զարգացման գագաթը և կնպաստի նրա հոգևոր աշխարհի հարստացմանը՝ սրտին մոտ ընդունելով ուրիշ մարդկանց վիշտն ու բերկրանքը, ապրելով նրանց ճակատագրով՝ որպես խորապես անձնական գործ: Պետք է սովորեցնել այնպիսի ընթերցանություն, որ երեխան կարդալով մտածի, որ ընթերցանությունը դառնա երեխայի համար գիտելիքներ ձեռք բերելու գործիք և միաժամանակ հաղորդակցման միջոց ու հոգևոր կյանքի հարստացման աղբյուր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի 439-Ն որոշման Հանրակրթության պետական չափորոշիչ
2. Հրաման 08-Լ 30. 04.2021թ. <<Մայրենի>>, <<Հայոց լեզու>>, <<Գրականություն>>, <<Հայ գրականություն>>առարկաների փորձնական չափորոշիչ և ծրագրեր /1-12-րդ դասարաններ/
3.Ջ. Գյուլամիրյան <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>> Եր.2008
4. 2. Ն. Օհանյան <<Կարդալու կարողության զարգացումը կրտսեր դպրոցում>>, <<Նախաշավիղ>> 7. 2010
5. Վ. Ա. Սուխոմլինսկի <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>>. Եր. <<Լույս>> 1986
6. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան-<<Ընթերցանության դասաժամերի դերն ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում>>, <<Նախաշավիղ>> 6, 2010
7. 6. А. И. Рейтблат. << Чтение вслух как культурная традиция>>. М. НЛО. 2001
8. Մայրենի 2, ՄԱՆՄԱՐ, Երևան 2014, 160էջ
9. Մայրենի 3, <<Մակմիլան-Արմենիա>> 2019, 160էջ
10. Մայրենի 4, ՄԱՆՄԱՐ,Երևան2018, 176էջ